

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE
AND
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Սուսաննա Բաղդասարյանը
Կարինե Բալայանը

ԼՈՒԻԶԻԴՈՒՆ ԸՆԴՊԵՄ ԹՈՒՐԶԻԱՅԻ ԳՈՐԾԸ
CASE OF LOIZIDOU v. TURKEY

Դատարանի 1998թ. հունիսի 25-ի վճիռը
(Արդարացի բավարարում)

Ստրասբուրգ

Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի գործով,
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նիստ գումարելով,
համաձայն Դատարանի A կանոնակարգի 51-րդ կանոնի, որպես Մեծ պալատ,
դատավորների հետևյալ կազմով. պրն Լ. Բերնհարդտ, Նախագահ, պրն Ֆ.
Գյուլչուկլու, պրն Լ. Ի.Փետիտի, պրն Ա. Սփիլման, պրն Ս.Կ. Մարտենս, տկն Ի.
Փալմ, պրն Ռ. Փեկանեն, պրն Ա.Ն. Լուիզու, պրն Ջ.Մ.Մորենիլա, սըր Ջոն
Ֆրիլանդ, պրն Ա.Բ. Բակա, պրն Մ.Ա. Լոպես Ռոչա, պրն Լ. Վիլդհաբեր, պրն Գ.
Միֆտուդ Բոնիչի, պրն Ջ. Մակարչիկ, պրն Պ. Ջամբրեկ, պրն Յու. Լոհմուս,
ինչպես նաև պրն Յ. Փետզուլդ, քարտուղար, և պրն Պ.Ջ.Մահոնիի,
Քարտուղարի տեղակալ,
1997թ. նոյեմբերի 29-ի և 1998թ. հունիսի 25-ի դռնփակ
խորհրդակցություններից հետո ընդունեց 50-րդ հոդվածի վերաբերյալ հետևյալ
վճիռը՝ վերջին նշված ամսաթվին:

ՎԱՐՈՒՅԹԸ

1. Գործը Դատարան է հանձնվել Կիպրոսի Հանրապետության
կառավարության կողմից («Կիպրոսի կառավարություն») 1993թ. նոյեմբերի 9-
ին՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության
մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ
հոդվածով սահմանված եռամսյա ժամկետում:

Գործի համար առիթ է հանդիսացել 1989թ. հուլիսի 8-ին Մարդու
իրավունքների եվրոպական հանձնաժողով («Հանձնաժողով»)՝ 25-րդ հոդվածի
համաձայն, Կիպրոսի քաղաքացի տկն Թիթինա Լուիզիդուի կողմից Թուրքիայի
Հանրապետության («Թուրքիայի կառավարություն») դեմ ներկայացված
զանգատը (թիվ 15318/89):

2. 1995թ. մարտի 23-ի վճռով Դատարանը մերժել էր Թուրքիայի
կառավարության որոշ նախնական առարկություններ, սակայն գործի
հանգամանքներին է կցել *ratione temporis* նախնական առարկությունը
(Շարքեր A, թիվ 310):

Գործի էության վերաբերյալ 1996թ. դեկտեմբերի 18-ի վճռով
(«հիմնական վճիռ») Դատարանը մերժել է *ratione temporis* առարկությունը և
գտել, որ դիմողին՝ Հյուսիսային Կիպրոսում գտնվող իր սեփականություն
հանդիսացող տարածք մուտք գործելու թույլտվության շարունակական
մերժումը և դրանից բխող՝ սեփականության նկատմամբ վերահսկողության
կորուստը հարցեր էին, որոնք Թուրքիայի «իրավագործության» շրջանակում էին
Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով, և, հետևաբար, պետք է վերագրվեին
Թուրքիային: Դատարանը նաև գտել է, որ խախտվել էր թիվ 1
արձանագրության 1-ին հոդվածը՝ առ այն, որ դիմողը փաստորեն կորցրել էր իր
սեփականությունը վերահսկելու, ինչպես նաև այն օգտագործելու և
տնօրինելու բոլոր հնարավորությունները: Սակայն Դատարանը գտել է, որ
տեղի չի ունեցել միջամտություն Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված
դիմողի՝ տան նկատմամբ հարգանքի իրավունքին (Վճիռների և որոշումների

ժողովածուներ, 1996- VI, էջ 2227-38, կետեր 31-36, և եզրափակիչ մասի 1-4-րդ կետեր):

3. Քանի որ 50-րդ հոդվածի կիրառման հարցը պատրաստ չէր որոշման համար, հիմնական վճռում դրա լուծումը հետաձգվել է: Դատարանը առաջարկել է դիմողին և Թուրքիայի կառավարությանը վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց գրավոր բացատրություններն այս հարցի վերաբերյալ և, մասնավորապես, տեղեկացնել Դատարանին այն հնարավոր համաձայնության մասին, որին նրանք կարող էին հասնել (ibid, էջ 2238-39, կետեր 67-69, և եզրափակիչ դրույթների 5-րդ կետ):

4. Չհասնելով որևէ համաձայնության, դիմողը և Թուրքիայի կառավարությունը 1997թ. հունիսի 23-ին և 24-ին ներկայացրել են իրենց հուշագրերը: Դիմողի հուշագրին կցված էր նրա կորուստների հաշվարկների սկզբունքները ներկայացնող ՝ գնահատման հաշվետվությունը: Այդ կապակցությամբ Չանձնաժողովի պատվիրակի մեկնաբանություններն ստացվել էին 1997թ. հուլիսի 28-ին:

5. Իր հուշագրում Թուրքիայի կառավարությունը վիճարկել է դիմողի սեփականության իրավունքի խախտման վերագրումը Թուրքիային և հայտարարել է, որ, հաշվի առնելով գործի վարույթի քաղաքական և իրավական բարդությունները, Դատարանը պետք է հարցի քննությունը հետաձգի մինչև կիպրական խնդրի քաղաքական կարգավորումը:

6. 1997թ. օգոստոսի 30-ին Դատարանը, մերժելով Թուրքիայի կառավարության կողմից արված՝ 50-րդ հոդվածի վարույթի sine die հետաձգման առաջարկը, առաջարկել է դիմողին, Թուրքիայի և Կիպրոսի կառավարություններին և Չանձնաժողովի պատվիրակներին մինչև 1997թ. հոկտեմբերի 31-ը ներկայացնել բոլոր այն նկատառումները, որ նրանք կցանկանային հայտնել: Որոշում է կայացվել հարցը քննարկելու նպատակով նիստ գումարելու մասին:

7. Կիպրոսի կառավարության բացատրություններն ստացվել են 1997թ. նոյեմբերի 3-ին, իսկ Թուրքիայի կառավարության և դիմողի բացատրությունները՝ 1997թ. նոյեմբերի 4-ին: Պատվիրակը հայտնել է, որ նա այդ հարցերին կանդրադառնա նիստի ընթացքում:

8. Չանաձայն Նախագահի որոշման՝ դռնբաց նիստը գումարվել է 1997թ. նոյեմբերի 27-ին՝ Ստրասբուրգում, Մարդու իրավունքների պալատում: Դատարանը մինչ այդ գումարել էր նախապատրաստական նիստ:

Դատարանի առջև հանդես են եկել՝

(ա) Թուրքիայի կառավարության կողմից՝

պրն Ռ. Թյուրմեն, Դեսպան, Եվրոպայի խորհրդում

Թուրքիայի մշտական ներկայացուցիչ,

ներկայացուցիչ,

պրն Ն. Օզմեն, Իրավախորհրդատու,

Արտաքին գործերի նախարարություն,

տկն Դ. Ակչայը, Եվրոպայի խորհրդում

Թուրքիայի մշտական ներկայացուցչի տեղակալ,

համաներկայացուցիչներ,

պրն Յ. Գոլսոնգը,

խորհրդատու,

պրն Ջ. Նեկատաջիլը, իրավախորհրդատու

փաստաբան.

պրն Ն. Աբինչին,

(բ) Կիպրոսի կառավարության կողմից՝

պրն Ա. Մարկիդեսը, Գլխավոր դատախազ,
ներկայացուցիչ,
պրն Մ. Շոուն,
փաստաբան,
Պրն Պ. Պոլիվյոսը,
փաստաբան,
տկն Կ. Փոլիքրոնիդուն, Ա Հանրապետության ներկայացուցիչ,
օրդ Ս.Ս. Ջոանիդեսը, Ա Հանրապետության ներկայացուցիչ,
փաստաբան,
տկն Ս.Փալեյը, Գլխավոր դատախազի խորհրդական
խորհրդատուներ

(գ) Հանձնաժողովի կողմից՝
պրն Ա. Թրեչսելը,
պատվիրակ.

(դ) դիմողի կողմից՝
պրն Ա. Դեմետրիադեսը,
փաստաբան,
պրն Ի. Բրաունլին, CBE, QC,
օրդ Ի. Լուզիդու,
փաստաբան:

Դատարանը լսել է պրն Թրեչսելին, պրն Դեմետրիադեսին, պրն Բրաունլինին,
պրն Մարկիդեսին, պրն Շոունին, պրն Թյուրմենին, պրն Նեկատիջիլին և պրն
Գոլսոնգին:

9. 1997թ. դեկտեմբերի 12-ին դիմողը ներկայացրել է 50-րդ հոդվածի
վարույթի հետ կապված ծախսերի և ծախքերի վերաբերյալ իր վերանայված
պահանջները, որոնք հիմնվում էին արդեն տեղի ունեցած միստի
արդյունքների վրա:

10. Այնուհետև, պրն Ռ. Բերնհարդտը, որը մինչ այդ հանդիսանում էր
Մեծ պալատի Փոխնախագահ, փոխարինել է որպես գործող Նախագահ պրն
Ռ.Ռիսդալին, վերջինիս մահից հետո՝ 1998թ. փետրվարի 18-ին (Դատարանի A
կանոնակարգի 21-րդ կանոնի կետ 6 և 51-րդ կանոնի կետ 6):

11. 1998թ. փետրվարի 25-ին գործող Նախագահը, Քարտուղարի
ներկայությամբ, վիճակահանությամբ ընտրել է սըր Ջոն Ֆրիլանդին, որը,
համաձայն 54-րդ կանոնի 2-րդ կետի՝ պետք է լրացներ Մեծ պալատի կազմը:
Պրն Բ. Ուոլշի մահից հետո, 1998թ. մարտի 31-ին նույն եղանակով ընտրվեց
պրն Ջ. Մակարչեկը:

ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

12. Դիմողը Կիպրոսի քաղաքացի է, որը մեծացել է Հյուսիսային Կիպրոսի
Կիրենիա տեղայնքում: 1972թ. նա ամուսնացել է և իր ամուսնու հետ
տեղափոխվել Նիկոսիա:

13. Նա հանդիսանում է Կիրենիայում գտնվող թիվ 4609, 4610, 4618, 4619,
4748, 4884, 5002, 5004, 5386 և 5390 հողակտորների սեփականատերը: Մինչև
1974թ. հուլիսի 20-ը Թուրքիայի կողմից Հյուսիսային Կիպրոսի գրավումը, թիվ
5390 հողակտորի վրա սկսվել էին շինարարական աշխատանքներ՝
բնակարանների կառուցման նպատակով, որոնցից մեկը նախատեսվում էր իր
իսկ ընտանիքի համար: Նա պայմանավորվածություն էր ձեռք բերել

սեփականության զարգացմամբ զբաղվող անձի հետ՝ հողի իր բաժինը փոխանակելու 100 քառակուսի մետր տարածքով բնակարանի հետ: Տվյալ հողակտորների նկատմամբ նրա սեփականության իրավունքները հաստատված են Կիպրոսի կադաստրի կողմից՝ ձեռքբերման պահին տրված գրանցման վկայականներով:

14. 1974թ. ի վեր դիմողը չի ունեցել Հյուսիսային Կիպրոսի՝ իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու և այն «անարգել տնօրինելու» հնարավորություն՝ Թուրքիայի զինված ուժերի ներկայության հետևանքով:

15. **1989թ. մարտի 19-ին դիմողը մասնակցել է կանանց կազմակերպության («Կանայք վերադառնում են տուն» շարժում) կազմակերպած երթին՝ Հյուսիսային Կիպրոսի զավթված շրջանում գտնվող Լիմբիա գյուղում, որը գտնվում է թուրքական Ակինչիլար գյուղի մոտ: Երթի նպատակն էր հայտարարել կիպրացի հույն փախստականների՝ տուն վերադառնալու իրավունքների մասին:**

Դեկլարելով երթի մասնակից հիսուն կանանցից բաղկացած մի խումբ՝ նա շարժվել է սարն ի վեր՝ դեպի Կիպրոսի թուրքական գրավյալ տարածքի այն մասը, ուր գտնվում էր Սուրբ Խաչի եկեղեցին՝ ճանապարհին անցնելով ՄԱԿ-ի պահակակետով: Երբ նրանք հասել են եկեղեցու բակ, թուրք զինվորները շրջապատել են նրանց և այլևս թույլ չեն տվել առաջ շարժվել: Թուրքական Կիպրոսի ոստիկանությունը ձերբակալել է նրան և ազատ արձակել ավելի քան տասը ժամ տևողությամբ ազատագրկումից հետո:

Դատարանին ներկայացված վերջնական պահանջները

16. Դիմողը հայտարարել է, որ ինքն իրավունք ունի արդարացի բավարարման՝ իր սեփականության իրավունքի այն շարունակական խախտման համար, որի համար պատասխանատու է Թուրքիան:

17. Կիպրոսի կառավարությունը հաստատել է դիմողի պահանջները և հայտարարել, որ պետք է փոխհատուցվեն նաև տվյալ վարույթի հետ կապված ծախսերը և ծախքերը:

18. Թուրքիայի կառավարությունն առաջարկել է, որպեսզի Դատարանը մերժի դիմողի նյութական փոխհատուցման պահանջը՝ ըստ 50-րդ հոդվածի ձևակերպման «անհրաժեշտ» չլինելու պատճառաբանությամբ: Ի հավելումն, այս պահանջները չպետք է հաշվի առնվեն 50-րդ հոդվածի այն պայմանի տեսանկյունից, որ «որոշումը» կամ «միջոցը» պետք է իրականացրած լինի «Բարձր պայմանավորվող կողմը»:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

19. 50-րդ հոդվածը սահմանում է՝

«Այն դեպքում, եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավական կամ որևէ այլ իշխանություններ կայացրել են որոշում կամ կիրառել են միջոցներ, որոնք ամբողջովին կամ մասամբ հակասում են Կոնվենցիայով... սահմանված պարտականություններին, և եթե նշված Կողմի ներպետական օրենքը թույլ է տալիս այդ որոշումների կամ միջոցների հետևանքների միայն մասնակի փոխհատուցում, ապա Դատարանի որոշումը, անհրաժեշտության դեպքում, պետք է տուժած կողմի համար սահմանի արդարացի բավարարում»:

20. Դիմողը և Կիպրոսի կառավարությունը հայտարարել են, որ պետք է փոխհատուցում տրամադրվի՝ հաշվի առնելով Դատարանի կողմից դիմողի

սեփականության իրավունքի խախտման վերաբերյալ վճիռը: Դատարանում լսումների ընթացքում դիմողը հետ է վերցրել հուշագրում նշված՝ իր իրավունքների վերականգնմանը վերաբերող պահանջը:

Մյուս կողմից, Թուրքիայի կառավարությունը հայտարարել է, որ չկա արդարացի բավարարման իրավունք:

I. ԱՐԴԱՐԱՑԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

21. Թուրքիայի կառավարության կարծիքով՝ Թուրքիայի կառավարությունը միջազգային իրավունքում չի կարող պատասխանատու լինել «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» գործողությունների համար: Չկա որևէ իրավական հիմք Թուրքիային պատասխանատվության ենթարկելու համար, քանի որ միջազգային իրավունքում անբարձրված է, որ առաջին պայմանը, ինչը պետք է բավարարվի պետությանը պատասխանատվության ենթարկելու համար, այն է, որ անօրինական գործողությունը կամ վարքագիծը կարելի է վերագրել պետությանը, որի անունից գործել է անօրինական գործողություն կատարողը կամ վարքագիծ դրսևորողը:

Պետք է հաշվի առնվի նաև այն հանգամանքը, որ նույնիսկ այն դեպքերում, երբ վիճարկվող անօրինական գործողությունը հետևանք է ներպետական իշխանությունների ուղղակի գործողությունների, Հանձնաժողովն ընդունել է, որ ներպետական իշխանությունը չի կարող ենթարկվել պատասխանատվության այն պարագայում, երբ տվյալ ոլորտում իրավագործությունը փոխանցվել է որևէ միջազգային կազմակերպության (տե՛ս Մ. և Co.-ն ընդդեմ Գերմանիայի, Որոշումներ և զեկույցներ 64, էջ 138):

Կիպրոսում ունեցած Թուրքիայի ամբողջ իշխանությունը բխում է Ցյուրիխի և Լոնդոնի 1959թ. համաձայնագրերի և 1960թ. ստորագրված պայմանագրերից, որոնք դեռևս ուժի մեջ են: Դրանց հաջորդող նոր պայմանագրերը կամ տեքստերը (ինչպես, օրինակ՝ 1974թ. օգոստոսի 30-ի ժնկի հռչակագիրը, 1979թ. «տասը կետերի» պայմանագիրը, կամ 1992թ. Գաղափարների հավաքանին) որևէ նոր պարտավորություն չեն առաջացրել Թուրքիայի համար: Գանգատի առարկա գործողությունը, այլ կերպ ասած՝ վիճարկվող անօրինական գործողությունը, պետք է ուղղակիորեն հետևի պետությանը վերագրելի գործողությունից՝ լինի դա վարչական, զինված ուժերի, օրենսդրական կամ դատական իշխանությունների գործողություն: Չի գրանցվել որևէ այլ դեպք, երբ երրորդ պետությունը պատասխանատվության ենթարկվի այլ պետության գործողությունների համար, անկախ այն հանգամանքից, թե այդ պետությունը ճանաչված է, թե՛ ոչ, եթե այն իրականացնում է արդյունավետ իշխանություն սահմանադրորեն ստեղծված մարմինների միջոցով:

Այդ իսկ պատճառով, միջազգային իրավունքի սկզբունքների հետ անհամատեղելի կլինի, եթե Թուրքիային պարտադրվի փոխհատուցում վճարել:

Բացի դրանից, Թուրքիայի կառավարությունը շեշտել է, որ սեփականության իրավունքը և փոխադարձ փոխհատուցումը Կիպրոսի հակամարտության առանցքային հիմնահարցերից են: Այս հարցերը կարող են լուծում ստանալ միայն բանակցային ճանապարհով և հիմնվելով արդեն գոյություն ունեցող երկգոտիականության և երկհամայնքայնության սկզբունքների վրա: Անխուսափելի է, որ, ելնելով երկգոտիականության սկզբունքից, թուրք կիպրական սեփականությունները հարավում պետք է փոխանակվեն հույն կիպրական սեփականություններով՝ հյուսիսում, անհրաժեշտության դեպքում տարբերությունների դիմաց հավելյալ դրամական

փոխհատուցմամբ: 50-րդ հոդվածի հիման վրա փոխհատուցման տրամադրումը կխարխլեր երկու համայնքների միջև ընթացող բանակցային գործընթացը և կվնասեր այն բոլոր ջանքերին, որ գործադրվել են համաձայնեցված չափանիշների և սկզբունքների հիմքի վրա որևէ համաձայնության հասնելու նպատակով:

Ի ամփոփումն թուրքիայի կառավարությունը պնդել է, որ փոխհատուցումը «անհրաժեշտ չէ» 50-րդ հոդվածի հիման վրա: Ավելին, պահանջը պետք է մերժվի այն հիմքով, որ այս դրույթը պահանջում է տվյալ «որոշման» կամ «միջոցին» «Բարձր պայմանավորվող կողմի մասնակցությունը»: Վերը նշված պատճառներից հետևում է, որ այս գործում այդպիսի իրավիճակ չի եղել:

22. Դիմողը նշել է, որ Դատարանի՝ ըստ էության կայացրած հիմնական վճռի համաձայն՝ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շարունակական խախտում, որը վերագրվում էր Թուրքիային: Հիմնվելով *sibi ius ibi remedium* սկզբունքի վրա՝ անհրաժեշտ էր կայացնել վճիռ՝ ապահովելու համար դիմողի իրավունքի պաշտպանությունը:

23. Կիպրոսի կառավարությունն ընդգծել է, որ 50-րդ հոդվածի հետ կապված վարույթը չի հանդիսանում նախնական առարկությունների և գործի հանգամանքների կապակցությամբ Դատարանի կայացրած վճռի գանգատարկում: Դատարանի առջև հանդես եկողները չեն կարող փորձել կրկին վիճարկել այն հարցերը, որոնց կապակցությամբ Դատարանն արդեն վճիռ է կայացրել: Տվյալ գործում 50-րդ հոդվածը կիրառելի է, քանի որ Թուրքիայի կառավարությունը դիմողի սեփականության իրավունքի խախտման դիմաց որևէ փոխհատուցում չի կատարել:

24. Հանձնաժողովի պատվիրակը նույնպես հայտարարել է, որ դիմողը պետք է ստանա արդար բավարարում: Այն փաստը, որ «Կիպրոսի խնդիրը» լուծելու համար քաղաքական ջանքեր են գործադրվում, փոխհատուցման տրամադրումը մերժելու բավարար պատճառ չի հանդիսանում:

25. Դատարանը հիշեցնում է տվյալ գործի հարցերով ըստ էության կայացրած հիմնական վճռի 57-րդ կետում տեղ գտած այն եզրահանգումը, որ « Հյուսիսային Կիպրոսում գտնվող՝ իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու՝ դիմողի իրավունքի շարունակական մերժման և դրա հետևանքով այդ սեփականության նկատմամբ վերահսկողության կորստի հարցը գտնվում է Թուրքիայի «իրավագրության» ներքո՝ 1-ին հոդվածի իմաստով, և, հետևաբար, պետք է վերագրվի Թուրքիային» (հիմնական վճիռ, Վճիռների և որոշումների ժողովածուներ, 1996-VI, էջ 2236):

Դատարանը նաև գտել էր, որ դիմողը պետք է շարունակի համարվել իր հողի օրինական սեփականատերը՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակների համար, և որ «այն փաստը, որ դիմողը 1974թ. չի ունեցել իր սեփականություն հանդիսացող տարածքը մուտք գործելու հնարավորություն, հանգեցրել է նրան, որ վերջինս փաստորեն կորցրել է իր սեփականությունը վերահսկելու, ինչպես նաև այն օգտագործելու և տնօրինելու հնարավորությունը» (ibid, էջ 2237, կետ 63): Դատարանը եզրակացրել է, որ իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու շարունակական մերժումը հանդիսացել է չարդարացված միջամտություն դիմողի սեփականության իրավունքի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (ibid, էջ 2237-38, կետ 64):

26. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանն այն կարծիքին է, որ Կոնվենցիայի համաձայն՝ Թուրքիայի պատասխանատվության հարցը գանգատի առարկա հարցերի կապակցությամբ *res judicata* է: Դատարանը գտնում է, որ պետք է փոխհատուցում տրամադրվի համաձայն 50-րդ հոդվածի:

Այն պատճառաբանությունը, որ նմանատիպ որոշումը խարխլում է Կիպրոսի հարցի վերաբերյալ քաղաքական քննարկումներն ավելի, քան գործի հանգամանքների քննության փուլում՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում արձանագրելու կապակցությամբ, բավարար չէ (ibid, էջ 2236-38, կետեր 59 և 64):

Այսպիսով, Ղատարանը գտնում է, որ համաձայն 50-րդ հոդվածի՝ դիմողն իրավունք ունի ստանալու արդարացի բավարարում՝ իր սեփականության իրավունքների խախտման դիմաց՝ փոխհատուցման միջոցով:

II. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍ

27. Դիմողն ընդգծել է, որ չի պահանջում փոխհատուցում իր սեփականության ենթադրվող բռնագրավման դիմաց: Հաշվի առնելով, որ ըստ Ղատարանի որոշման ինքը շարունակում է հանդիսանալ գույքի օրինական սեփականատերը՝ բռնագրավման հարց չի կարող բարձրացվել: Այդ պատճառով նրա պահանջը վերաբերում է հողն օգտագործելու հնարավորության կորստին, ինչին հետևել է այդ հողը շահագործելու կամ վարձակալության տալու հնարավորության կորուստը: Հիմնվելով իր սեփականության և դրանից ակնկալվող եկամուտների գնահատման վերաբերյալ հաշվետվության վրա՝ դիմողը պահանջել է 621.900 կիպրական ֆունտ (CYP)՝ 1990թ. հունվարի 22-ից, այսինքն՝ Թուրքիայի կողմից Ղատարանի պարտադիր իրավագործության ընդունումից մինչև 1997թ. վերջն ընկած ժամանակահատվածում իրեն պատճառված նյութական վնասի դիմաց (տե՛ս վերը՝ կետ 4):

Գնահատման վերաբերյալ հաշվետվությունում կիրառվել էր հետևյալ մեթոդը. հաշվարկվել էր սեփականության շուկայական գինը՝ 1974թ. դրությամբ, և ամեն տարվա համար ավելացվել էր 12%՝ հաշվելու համար, թե որքան կկազմեր սեփականության արժեքն այսօր, եթե Կիպրոսի Հյուսիսային շրջանը գրավված չլիներ թուրքական բանակի կողմից: Ընդգծվել էր այն հանգամանքը, որ սեփականությունը գտնվում էր Կիրենիայի այն շրջանում, որը 1974թ. զբոսաշրջիկության և բնակավայրային ակտիվ զարգացման կենտրոն էր: Սեփականության գրավումը զրկել էր նրան այդ սեփականությունը վարձակալության տալու հնարավորությունից, ինչի արդյունքում նա զրկվել էր նաև վարձակալության ստացվելիք գումարից:

Նյութական վնասի դիմաց պահանջվող գումարը հանդիսանում էր հողի համար տրվող վարձի այն ամբողջ գումարը, որ կարող էր կուտակվել 1990-1997թթ. ընթացքում՝ հաշվարկելով քննարկվող յուրաքանչյուր տարվա համար՝ սեփականության գնահատված շուկայական արժեքի 6%-ի չափով:

28. Կիպրոսի կառավարությունը հաստատել է դիմողի պահանջը: Նրանք մասնավորապես նշել են, որ այն հանգամանքը, որ Թուրքիան դեռևս շարունակում էր անօրինականորեն գրավել Կիպրոսի Հանրապետության այդ շրջանը, չէր կարող լինել նյութական վնասի դիմաց վճարվող փոխհատուցման գումարի չափն իջեցնելու պատճառ: Հակառակ մոտեցումը կնշանակեր թույլ տալ սխալ գործողին շահել իր սխալ գործողությունից, քանի որ տվյալ գործում Կոնվենցիայի խախտումը հետևանք էր Թուրքիայի կողմից կղզու այդ շրջանի անօրինական գավթման և գրավման:

29. Թուրքիայի կառավարությունը պնդել է, որ վնասների փոխհատուցման պահանջը չպետք է բավարարվեր Ղատարանի կողմից՝ վերը նշված պատճառներից ելնելով (տե՛ս կետ 21): Այս առումով դիմողի պահանջած

գումարի վերաբերյալ Թուրքիայի կառավարությունը չի արել որևէ մեկնաբանություն:

30. Հանձնաժողովի պատվիրակը հայտարարել է, որ դիմողի անունից կազմված գնահատողի կարծիքը՝ հողի զարգացման ներուժի վերաբերյալ, չէր նախատեսում իրատեսական հիմք նյութական վնասի հաշվարկման համար (տե՛ս վերը՝ կետ 4): Կիպրոսում տեղի ունեցող պատմական իրադարձություններն իրենց ազդեցությունն են ունեցել ոչ միայն կոնկրետ դիմողի, այլև նմանատիպ իրադրության մեջ հայտնված բազմաթիվ այլ անձանց վրա: Հետևաբար, նրանք չեն կարող ամբողջովին անտեսվել: Դիմողն իրավունք ունի ստանալու լիարժեք փոխհատուցում՝ սեփականություն հանդիսացող տարածքի և դրա նկատմամբ վերահսկողության հնարավորության կորստի դիմաց, սակայն ոչ ընդհանուր քաղաքական իրավիճակով պայմանավորված՝ այդ սեփականության արժեքի կորստի դիմաց: Իր կարծիքով 100.000 CYP-ի չափով փոխհատուցումը կլիներ ավելի համապատասխան:

31. Դատարանը հիշեցնում է, որ դիմողը շարունակում է հանդիսանալ ինը հողակտորների և մեկ բնակարանի օրինական սեփականատերը (տե՛ս վերը՝ կետ 13), ինչպես նաև այն հանգամանքը, որ Դատարանի կողմից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման արձանագրումը հիմնված էր այն փաստի վրա, որ 1974թ. ի վեր զրկված լինելով իր սեփականությունը հանդիսացող հողամաս մուտքի իրավունքից, նա կորցրել էր դրա նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև այն օգտագործելու և տնօրինելու բոլոր հնարավորությունները (տե՛ս վերը՝ մեջբերված հիմնական վճիռը, էջ 2237-38, կետեր 60-64): Այդ իսկ պատճառով նա իրավունք ունի փոխհատուցում ստանալու իր իրավունքների խախտումից ուղղակիորեն հետևող կորուստների դիմաց՝ Թուրքիայի կողմից Դատարանի պարտադիր իրավագրության ճանաչման օրվանից, այսինքն՝ 1990թ. հունվարի 22-ից մինչ այսօր ընկած ժամանակահատվածի համար:

32. Չնայած նրան, որ Թուրքիայի կառավարությունն իր փաստարկները սահմանափակել է դիմողի փոխհատուցման իրավունքի վիճարկմամբ, և չի փորձել վիճարկել տնտեսական կորուստը հաշվարկելիս դիմողի կիրառած մոտեցումը, Դատարանը, միայն այդ պատճառով, չի կարող անառարկելիորեն ընդունել դիմողի կողմից ներկայացված հաշվարկները:

33. Այս առումով Դատարանն ընդունելի է համարում այն ընդհանուր մոտեցումը, որը կիրառվել էր դիմողի կրած կորուստները գնահատելիս՝ հաշվի առնելով որպես գույք շուկայական արժեքի տոկոս հաշվարկված վարձավճարը, ինչը կարող էր գույքի վարձակալությունից ստացվել խնդրո առարկա ժամանակահատվածում:

Սակայն դիմողի կողմից գնահատումն անխուսափելիորեն կապված է նշանակալի շահարկումների հետ, քանի որ չկան իրական տվյալներ, որոնց հիման վրա կարելի կլիներ կատարել համեմատություն: Գնահատելիս՝ հաշվի չեն առնվել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են գույքի շուկայի անկայունությունը և դրա զգայունակությունը՝ ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային ազդեցությունների նկատմամբ: Ըստ դիմողի կատարած գնահատման մեթոդի՝ ենթադրվում է, որ Կիրենիայի շրջանում անշարժ գույքի արժեքը յուրաքանչյուր տարի՝ սկսած 1974թ. մինչև 1997թ. կայուն կերպով աճել է 12%-ով, և որ դիմողն իրականում կփորձեր կան կկարողանար վարձով տալ իր հողերն այդ բարձրացած արժեքի 6%-ով: Նույնիսկ ընդունելով այդ շրջանի կասկած չհարուցող զարգացման ներուժը՝ այն կանխավարկածը, որ անշարժ գույքի շուկան կարող էր անփոփոխ կայուն աճ ապրել քսաներեք տարվա ընթացքում, չափազանց վիճելի է: Դատարանը, հետևաբար, չի կարող

տոկոսային այս աճն ընդունել որպես դիմողի կորուստը հաշվարկելու բավարար հիմք:

34. Հաշվի առնելով վերը նշված անորոշությունները, որոնք անխուսափելի են դիմողի կրած վնասների հաշվարկները կատարելու համար կիրառվող որևէ մեթոդի դեպքում, և գնահատումը կատարելով արդարացի հիմքերի վրա, Դատարանը որոշել է տրամադրել 300.000 CYP (4\$) նյութական վնասի կապակցությամբ:

III. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐ

35. Դիմողը նաև պահանջել է 621.900 CYP՝ ոչ նյութական վնասների դիմաց: Նա նշել է, որ գոյություն ունեն բազմաթիվ վատթարացնող հանգամանքեր, որոնք ուղղակիորեն կապված են իր հետ, և որոնք պետք է հաշվի առնի Դատարանը: Սա վերաբերում է դիմողի ճնշված և նյարդային վիճակին, ինչն արդյունք էր իր իրավունքներից երկարատև զրկված լինելու, ինչպես նաև անօգնականության զգացողության, որ կապված էր Կիպրոսի հյուսիսում Թուրքիայի զինված ուժերի ներկայության և սեփականությունը վերադարձնելու իր ապարդյուն ջանքերի հետ: Պետք է նաև հաշվի առնվի այն հանգամանքը, որ դիմողը մեծանալով Կիրենիայում, ուր նրա ընտանիքը ապրել էր սերդե սերունդ, այժմ տեղահանված էր իր իսկ երկրից: Այն փաստը, որ Թուրքիայի կառավարությունը չի փորձել որևէ կերպ արդարացնել իր միջամտությունը դիմողի սեփականության իրավունքին, հանդիսանում է ևս մեկ վատթարացնող հանգամանք, որ պետք է հաշվի առնել:

Դիմողի կարծիքով կային նաև հանգամանքներ՝ կապված եվրոպական հասարակական կարգի և հանրային շահերի որոշ նկատառումների հետ: Ի հավելումն փոխհատուցման պարտավորության՝ ներկա իրավիճակում առկա էր ոչ նյութական վնասների ծավալուն հատուցման անհրաժեշտություն, ինչը խթան կհանդիսանար Կոնվենցիայում ամրագրված իրավական չափորոշիչների կատարման համար: Դատախազական ուղիների դանդաղությունը և դրանց ճնշող ազդեցությունը դիմողի վրա, Պատասխանող կառավարության հապաղիչ, ձգձգիչ վերաբերմունքը և վարույթի ընթացքում նրանց կողմից բարձրացված տարբեր անհիմն առարկությունները նույնպես պետք է հաշվի առնվեն:

Մեկ այլ վատթարացնող հանգամանք կապված է գրավյալ տարածքներում Թուրքիայի և նրա ներկայացուցիչների վարած կայուն քաղաքականության հետ, ըստ որի՝ նրանք խտրականորեն են վերահսկողություն սահմանում կիպրացի հույն սեփականատերերի գույքի նկատմամբ և նրանց դուրս մղելուն այնտեղից: Ռասայական խտրականության այս քաղաքականությունը հանդիսանում է դիմողի համար ճնշվածության պատճառ և մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների ոտնահարում:

36. Կիպրոսի կառավարությունը հաստատել է այս կապակցությամբ դիմողի ներկայացրած պահանջները: Ըստ դրանց՝ դիմողի անօգնականության և ճնշվածության խոր զգացումն արդյուք է իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու հնարավորություն չունենալու, ինչպես նաև այն հանգամանքի, որ խնդրո առարկա սեփականությունը սերտորեն կապված էր դիմողի ընտանեկան հարաբերությունների հետ, քանի որ այն հանդիսանում էր ընտանեկան ժառանգության մի մասը: Կիպրացի հույների նկատմամբ կիրառված էթնիկական խտրականությունը նույնպես գործի հետ առնչություն ունեցող նկատառում է, քանի որ այն պետք է որ ազդեցություն ունենար դիմողի զգացմունքների վրա:

37. Թուրքիայի կառավարությունն այս առնչությամբ չի ներկայացրել որևէ բացատրություն:

38. Հանձնաժողովի պատվիրակը համաձայնել է, որ փոխհատուցում պետք է տրամադրվի, սակայն չի կարողացել ընդունել դիմողի կողմից վկայակոչված որոշ «վատթարացնող հանգամանքեր», մասնավորապես նրա այն փաստարկները, որ ինքը գրկվել էր իր տնից (8-րդ հողվածի համաձայն ներկայացված գանգատը մերժվել էր Դատարանի կողմից), և որ նա ենթարկվել էր խտրականության որպես կիպրացի հույն, քանի որ սկզբնական գանգատում 14-րդ հողվածի խախտման հարցն ընդհանրապես չէր բարձրացվել: Այնուհետև նա գտել է, որ 50-րդ հողվածի կիրառման մեջ չպետք է ընդգրկվի որևէ պատժիչ տարր, քանի որ դիմողի կողմից բարձրացված «պետական քաղաքականությանը» վերաբերող գանգատները տարածվում էին տեղահանված կիպրացի հույների ընդհանուր դրության վրա, և այդպիսով դուրս էին առանձին գործի սահմաններից: Նա հայտարարել է, որ 20.000 CYP չափով գումարը կլիներ պատշաճ փոխհատուցում:

39. Դատարանն այն կարծիքին է, որ այս կապակցությամբ փոխհատուցում պետք է նշանակվի տառապանքի և անօգնականության ու ճնշվածության այն զգացողության համար, որ դիմողը կրել էր այս տարիների ընթացքում՝ հնարավորություն չունենալով իր սեփականությունն օգտագործելու ըստ իր հայեցողության:

40. Սակայն, ինչպես Հանձնաժողովի պատվիրակը, Դատարանը նույնպես շեշտում է, որ տվյալ գործը վերաբերում է դիմողի անձնական հանգամանքների հետ կապված անհատական գանգատին, և ոչ թե այն ընդհանուր իրադրությանը, որ առկա է Հյուսիսային Կիպրոսում՝ կիպրացի հույների սեփականության իրավունքների առումով: Այս կապակցությամբ Դատարանը հիշեցնում է, որ հիմնական վճռում Դատարանը նշել է, որ «Դատարանը չպետք է արտահայտվի Դատարանի առջև հանդես եկածների այն պնդումների վերաբերյալ, որոնք առնչվում են միջազգային իրավունքի տեսանկյունից 1974թ. Թուրքիայի զինված ուժերի՝ կղզի մուտք գործելու օրինականությանը կամ անօրինականությանը» (վերը մեջբերված, էջ 2236, կետ 56): Դատարանը նաև մերժել էր դիմողի այն պնդումը, որ խախտվել է իր տան նկատմամբ հարգանքի իր իրավունքը (ibid, էջ 2238, կետեր 65-66), ինչպես նաև չէր կայացրել որևէ որոշում ռասայական խտրականության հարցի վերաբերյալ, որը չէր ընդգրկվել Կոնվենցիայի համաձայն դիմողի ներկայացրած գանգատի մեջ:

Իրականացնելով անաչառ գնահատում՝ Դատարանն այս կապակցությամբ տրամադրում է 20.000 CYP փոխհատուցում:

IV. ԴԻՄՈՂԻ ԾԱԽՍԵՐԸ և ԾԱԽՔԵՐԸ

41. Դիմողը, որը ներկայացրել էր մանրամասն հաշիվ՝ Հանձնաժողովում և Դատարանում վարույթի տարբեր փուլերում իր կրած ծախսերի վերաբերյալ, ծախսերի և ծախքերի դիմաց պահանջել է 137.084.83 CYP՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը: Կիպրոսի կառավարությունը հաստատել է նրա պահանջը, որը բաղկացած է հետևյալ կետերից՝

- (ա) Հանձնաժողովում վարույթի հետ կապված՝ 34.571.25 CYP,
- (բ) Դատարանում նախնական առարկությունների փուլի հետ կապված՝ 30.190 CYP,
- (գ) Դատարանում գործի ըստ էության քննության փուլի հետ կապված՝ 19.112.38 CYP,
- (դ) 50-րդ հողվածի վարույթի հետ կապված՝ 23.211.20 CYP:

Նա նշել է, որ այսպիսի բացառիկ բարդության գործում, որն ինչպես Հանձնաժողովում, այնպես էլ Դատարանում քննության էր առնվել բազմաթիվ նիստերում, լիովին արդարացված էր երկու կիպրացի իրավաբանների և Միացյալ Թագավորության կողմից նշանակված փաստաբանի ծառայություններից օգտվելը:

42. Թուրքիայի կառավարությունը չի մեկնաբանել դիմողի՝ այս կապակցությամբ ներկայացրած պահանջները:

43. Ըստ պատվիրակի՝ ծախսերը չափազանցված էին, քանի որ շատ փուլերում չկար անհրաժեշտություն, որպեսզի դիմողը ներկայացված լինելու երկու իրավաբաններով և լրացուցիչ խորհրդականներով: Բացի դրանից, դիմողն ստացել էր զգալի օգնություն նաև Կիպրոսի կառավարության կողմից:

44. Դատարանը գտնում է, որ հաշվի առնելով գույքի հետ կապված՝ դիմողի գանգատների համատեքստը, սույն գործից բխում էին հիմնարար կարևորության խրթին հարցեր, որոնք վերաբերում էին Կոնվենցիայի համակարգին՝ որպես ամբողջություն: Տեղի էին ունեցել մի քանի նիստեր՝ Հանձնաժողովում, և երեք նիստ՝ Դատարանում: Այսպիսով, դիմողն իրավունք ուներ իր շահերը ներկայացնելու համար օգտվել երկու կիպրացի փաստաբանների և Միացյալ Թագավորության կողմից նշանակված փաստաբանի ծառայություններից:

45. Նա եզրակացնում է, որ ծախսերը և ծախքերը կատարվել են փաստացիորեն և անհրաժեշտաբար և ընդունելի են գումարային առումով, և այդ իսկ պատճառով պետք է տրամադրվի ամբողջական փոխհատուցում:

V. Կիպրոսի կառավարության ծախսերը և ծախքերը

46. Կիպրոսի կառավարությունը նույնպես պահանջել է փոխհատուցում ծախսերի և ծախքերի դիմաց՝ կապված Դատարանում գործի վարույթի հետ:

Այս կապակցությամբ նրանք պահանջել են 48.315.77 CYP: Նրանք բացատրել են, որ պահանջում էին ընդհանրապես իրենց ծախսերի հատուցում և ոչ թե փոխհատուցում, քանի որ գործի մեջ ներդրվել էին զգալի միջոցներ. այս մոտեցումը լիովին արդարացվել է Դատարանի երկու վճիռներով:

47. Թուրքիայի կառավարությունն այս պահանջի վերաբերյալ չի արել որևէ մեկնաբանություն:

48. Սակայն Հանձնաժողովի պատվիրակը վիճարկել է այն:

49. Դատարանը հիշեցնում է այն հիմնական սկզբունքը, որ միջազգային դատարաններում շարունակելի գործերի հետ կապված ծախսերը կրում են իրենք՝ պետությունները (տե՛ս, օրինակ՝ Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրության (օրենսդրական ակտի) 64-րդ հոդվածը և այդ դատարանի խորհրդատվական կարծիքը «ՄԱԿ-ի վարչական դատարանի թիվ 158 վճիռի վերանայման դիմումի» վերաբերյալ, ICJ, Ձեկույցներ, 1993թ., էջ 211, կետ 96): Նա գտնում է, որ այս կանոնի կիրառումը նույնիսկ ավելի լայն է այն դեպքերում, երբ, հաշվի առնելով Կոնվենցիայի յուրահատուկ բնույթը՝ որպես եվրոպական հասարակական կարգը (ordre public) սահմանող փաստաթուղթ, Բարձր պայմանավորվող կողմերը գործեր են հարուցում Կոնվենցիայի հաստատություններում՝ կամ 24-րդ հոդվածի և 48-րդ հոդվածի (գ) կետի հիման վրա՝ որպես Կոնվենցիայում ամրագրված իրավունքների կոլեկտիվ իրականացման մաս, կամ 48-րդ հոդվածի (բ) կետի հիման վրա՝ իրենց քաղաքացիների իրավունքները պաշտպանելու նպատակով: Սկզբունքորեն, Դատարանի կարծիքով, ճիշտ չէր լինի, եթե այն պետությունները, որոնք գործում են, *inter alia*, Կոնվենցիայի համայնքի ընդհանուր շահերից ելնելով, նույնիսկ այն դեպքերում, երբ դրանք համընկնում են իրենց իսկ շահերի հետ, դա անելու համար փոխհատուցում ստանալին ծախսերի և ծախքերի դիմաց:

50. Հետևաբար, Ղատարանը մերժում է Կիպրոսի կառավարության՝ ծախսերի և ծախքերի պահանջը:

VI. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում

51. Ըստ Ղատարանի տրամադրության տակ եղած տեղեկությունների՝ սույն վճռի ընդունման օրվա դրությամբ Կիպրոսում՝ օրենքով սահմանված կիրառելի տոկոսը տարեկան 8% է:

ԱՅՍ ՀԻՍՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆ Ը

1. Մերժում է տասնհինգ ձայնով՝ ընդդեմ երկուսի, Պատասխանող կառավարության այն պնդումը, որ դիմողն իրավունք չունի արդարացի բավարարում ստանալու՝ Կոնվենցիայի 50-րդ հոդվածի համաձայն,

2. Վճռում է՝ տասնչորս ձայնով՝ ընդդեմ երեքի, որ պատասխանող կառավարությունը պետք է երեք ամսվա ընթացքում դիմողին վճարի 300.000 (երեք հարյուր հազար) կիպրական ֆունտ՝ նյութական վնասի դիմաց,

3. Վճռում է՝ տասնհինգ ձայնով՝ ընդդեմ երկուսի, որ Պատասխանող կառավարությունը պետք է երեք ամսվա ընթացքում դիմողին վճարի 20.000 (քսան հազար) կիպրոսի ֆունտ՝ ոչ նյութական վնասի դիմաց,

4. Վճռում է՝ տասներեք ձայնով՝ ընդդեմ չորսի, որ Պատասխանող կառավարությունը պետք է երեք ամսվա ընթացքում դիմողին վճարի 137.084 (հարյուր երեսունյոթ հազար ութսունչորս) կիպրական ֆունտ և 83 (ութսուներեք) ցենտ՝ ծախսերի և ծախքերի դիմաց,

5. Վճռում է՝ տասնհինգ ձայնով՝ ընդդեմ երկուսի, որ տարեկան 8% սովորական տոկոսադրույք պետք է վճարվի վերը նշված եռամսյա ժամկետը լրանալուց սկսած մինչև վճարումը,

6. Մերժում է՝ միաձայն, Կիպրոսի կառավարության՝ ծախսերի և ծախքերի պահանջը,

7. Մերժում է՝ միաձայն, դիմողի՝ արդարացի բավարարման պահանջի մնացյալ մասերը:

Կատարված է անգլերենով ու ֆրանսերենով և ծանուցվել է գրավոր՝ 1998թ. հուլիսի 28-ին՝ համաձայն Ղատարանի A կանոնակարգի 55-րդ կանոնի 2-րդ կետի 2-րդ ենթակետի.

Ստորագրված է. Ռոլվ Բերնհարդտ,

Նախագահ

Ստորագրված է. Հերբերթ Փեթզոլդ,

Քարտուղար

Ըստ Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի և Ղատարանի A կանոնակարգի 53-րդ կանոնի 2-րդ կետի՝ սույն վճռին կցվում են հետևյալ չհամընկնող կարծիքները.

(ա) պրն Մորենիլայի մասնակի չհամընկնող կարծիքը,

(բ) պրն Միֆսուդ Բոնիչիի մասնակի չհամընկնող կարծիքը,

(գ) պրն Գյուլչուկլուի չհամընկնող կարծիքը,

(դ) պրն Փետիտիի չհամընկնող կարծիքը:

ԴԱՏԱՎՈՐ ՄՈՐԵՆԻԼԱՅԻ ՄԱՍՆԱԿԻ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Ես համաձայն եմ մեծամասնության հետ, որ դիմողը պետք է ստանար արդարացի բավարարում՝ Կիպրոսի հյուսիսում գտնվող իր սեփական տարածքը մուտք գործելու շարունակական մերժման և դրան հետևող՝ այդ սեփականության նկատմամբ վերահսկողության կորստի դիմաց, որի համար, ինչպես սահմանվել էր Դատարանի կողմից 1996թ. դեկտեմբերի 18-ի հիմնական վճռում, պատասխանատու էր Թուրքիան (Վճիռների և որոշումների ժողովածուներ, 1996-VI, էջ 2236, կետ 57): Սակայն ես համաձայն չեմ եզրափակիչ դրույթների 2-րդ և 4-րդ կետերին հետևյալ պատճառաբանությամբ.

2-րդ կետի կապակցությամբ՝ մեծամասնությունն անհրատեսականորեն անտեսել է այն շրջանի քաղաքական իրավիճակը, որտեղ դիմողն ունի սեփականություն՝ վերջին ութ տարիների ընթացքում նրա հողի օգտագործման և հողի հետագա մշակման և վարձակալության հնարավորությունների կորստի դիմաց նյութական վնասի պահանջի քննության ժամանակ, ինչպես նաև այդ պահանջն անաչառորեն գնահատելիս (սույն վճռի կետեր 33 և 34): Ինչպես Զանձնաժողովի պատվիրակը (կետ 30)՝ ես գտնում եմ, որ 100.000 CYP-ն կլինեի պատշաճ փոխհատուցում:

4-րդ կետի կապակցությամբ՝ ես գտնում եմ, որ 137.084.83 CYP՝ դիմողի ծախսերի և ծախքերի դիմաց սահմանված փոխհատուցման գումարը, որը պետք է վճարի Պատասխանող կառավարությունը, չափազանցված է: Զանձայն Կոնվենցիայի 50-րդ հոդվածի և ելնելով Դատարանի նախադեպային իրավունքի մեկնաբանությունից (տե՛ս Pine Valley Development Ltd. և այլոք ընդդեմ Իռլանդիայի 1993թ. փետրվարի 9-ի վճիռը (հոդված 50) Շարքեր A, թիվ 240-B, էջ 89, կետ 19) փոխհատուցվում են տուժող կողմի այն ծախսերը, որոնք եղել են անհրաժեշտ: Սակայն ես չեմ կարծում, որ տվյալ գործում կար որևէ անհրաժեշտություն, որ դիմողը Դատարանում և Զանձնաժողովում հանդես գար երկու կիպրացի փաստաբանների և մեկ արտասահմանցի՝ միջազգային իրավունքի մասնագետի ներկայացուցչությամբ, քանի որ, հաշվի առնելով սույն գործի իրավական հարցերի բարդությունը՝ մեկ պաշտպանի ծառայությունները կլինեին բավարար: Այդ իսկ պատճառով ես համարում եմ, որ Պատասխանող կառավարությունը պետք է պարտավորվի վճարելու այս գումարի միայն մեկ երրորդը:

ՊԱՏԱՎՈՐ ՄԻՖՍՈՒԴ ԲՈՆԻՉԻ ՄԱՍՆԱԿԻ ՉՅԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

1. Ես չեմ կարող քվեարկել դիմողի կողմից ծախսերի և ծախքերի դիմաց պահանջված 137.084.83 CYP գումարը տրամադրելուն կողմ: Այդ գումարը համարժեք է 185.064.52 GBP՝ համաձայն դիմողի ներկայացրած փոխանակման կուրսի, այն է՝ $CYP1 = GBP 1.35$:
2. Ինչպես Զանձնաժողովի պատվիրակը՝ իր բանավոր հայտարարությունում, և իմ գործընկեր դատավորների փոքրամասնությունը, ես նույնպես համարում եմ այդ պահանջը չափազանցված:
3. Ինքնին պարզ է, որ գործը բարդ էր և դժվար, սակայն, այնուամենայնիվ, նմանօրինակ որակումները չեն արդարացնում ծախսերի այն ծանրակշիռ հաշիվը, որ ներկայացրել է դիմողը, և որը, ի զարմանս ինձ, ընդունվել է Դատարանի կողմից: Թուրքիայի կառավարությունը նպաստեց սրան՝ հարցի վերաբերյալ ոչ մի բացատրություն չտալով: Այդ կառավարությունը ոչ մի բացատրություն չէր ներկայացրել նաև դիմողի՝ իր վնասների հաշվարկների մեթոդի վերաբերյալ (տե՛ս վճռի 32-րդ կետը), սակայն Դատարանը չէր կարող

զուտ այս հանգամանքից ելնելով, առանց քննարկումների, ընդունել դիմողի բացատրությունները: Կասկած չկա, որ նույն սկզբունքը կիրառելի է նաև ծախսերի և ծախքերի հարցի նկատմամբ:

4. Բացատրելու համար այս կապակցությամբ դիմողի ներկայացրած պահանջի նկատմամբ իմ քննադատությունը, ես կներկայացնեմ հետևյալ մանրամասները՝

(ա) համաձայն 1995թ. հունիսի 26-ի ծախսերի նախահաշվի՝ երկու կիպրացի փաստաբաններին, որոնք իրականացրել էին գործի ուսումնասիրությունը, նյութերի նախապատրաստումը, ինչպես նաև պատասխան բացատրությունները և ըստ էության լուսմների վարումը, վճարվել էր 18.900 GBP (14000 CYP), մինչդեռ այն գումարը, որ պետք է վճարվեր մասնագետ փաստաբանին և գործն ուսումնասիրող փաստաբանին՝ գործն ուսումնասիրելու, Կիպրոսի ճանապարհածախսի, պատասխան բացատրությունների նախապատրաստման և ըստ էության լուսմների վարման համար, կազմում էր 35.888GBP (29.416CYP), ընդհանուր՝ 54.788GBP.

(բ) գործի նախնական առարկությունների փուլի համար, նույն նկարագրությամբ, կիպրացի փաստաբաններին պետք է վճարվեր 12.150 GBP (9.000 CYP), իսկ մասնագետ փաստաբանին և պաշտպանին՝ 24.000GBP (17.760 CYP), ընդհանուր՝ 36.150GBP.

(գ) և վերջապես, վերջին՝ երրորդ փուլում, որը վերաբերում էր 50-րդ հոդվածին, դիմողի հուշագրի նախապատրաստման և բանավոր լուսմներին մասնակցության համար նախահաշիվը կազմել է 9.045GBP (6.700 CYP) և 18.795 GBP (15.046CYP), ընդհանուր՝ 27.840GBP:

Հուշագիրը կազմված էր երկու ինտերվյուով, 22 էջից և դրա մեկ երրորդը բաղկացած էր Դատարանի վճռի մեջբերումներից:

Պաշտպանների ծառայությունների համար վճարվող ընդհանուր գումարը կազմեց 118.778 GBP, ինչը, ըստ իս, չափից ավելի է և չարդարացված.

(դ) վերջապես, բացատրելու համար, թե ես ինչու չքվեարկեցի ծախսերի և ծախքերի փոխհատուցմանը՝ ամբողջությամբ, և «en bloc» կողմ, 50-րդ հոդվածի համաձայն դիմողի պահանջների առնչությամբ կցանկանայի նշել, որ դիմողը հանձնարարել էր Կիպրոսում գտնվող իր սեփականության գնահատման հաշվետվությունը կիպրացի գնահատողների մի ֆիրմայի: Ընդհանուր արժեքը կազմում էր 1.734 CYP: Նրանց կողմից կիրառված մեթոդը չընդունվեց Դատարանի կողմից, քանի որ այն պարունակում էր բավականին մեծաթիվ շահարկումներ և բոլորովին հաշվի չէր առնում անշարժ գույքի շուկայի անկայունությունը և դրա զգայունակությունը ներպետական և միջազգային ազդեցությունների նկատմամբ (կետ 33): Չնայած այս ամենին՝ արժեքն ընդունվել է:

ԴԱՏԱԿՈՐ ԳՅՈՒԼՉՈՒԿԼՈՒԻ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿՎՐԾԻՔԸ
(Թարգմանություն)

Ես ցավում եմ, որ չեմ կարող համաձայնել Դատարանի մեծամասնության «արդարացի բավարարման» կապակցությամբ կարծիքին:

50-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ իմ կարծիքը ոչ միայն տարածվում է և կրկնում իմ անհամաձայնությունը 1995թ. մարտի 23-ի (40/1993/435/514) «նախնական առարկությունների» և 1996թ. դեկտեմբերի 18-ի (40/1993/435/514) «ըստ էության» վճիռների կապակցությամբ, այլ նաև հիմնված է Կոնվենցիայի 50-րդ հոդվածով սահմանված արդարացի բավարարման գաղափարին ներհատուկ էական հարցերի վրա:

1. Ըստ այդ դրույթի ձևակերպման՝ Դատարանի նախադեպային իրավունքի և իրավունքի հեղինակների միաձայն կարծիքի՝ 50-րդ հոդվածը չի պարտավորեցնում Դատարանին անհրաժեշտաբար տրամադրել փոխհատուցում:

Արդարացի բավարարման կապակցությամբ Դատարանի լիազորությունների հայեցողական բնույթը բխում է արդարացի փոխհատուցում տրամադրելու անհրաժեշտությունը որոշելու լիազորությունից, ինչպես նաև այն փաստից, որ Դատարանի որոշումն այդ հարցի վերաբերյալ ոչ մի առնչություն չունի *ordre public*-ի հետ: Հետևաբար, ոչ Կոնվենցիայով, ոչ էլ առկա պրակտիկայով Դատարանից չի պահանջվում պարտադիր կերպով դիմողին տրամադրել որևէ փոխհատուցում:

Դատարանն ինքը, նույնիսկ խիստ անհատական գործերում, որոնք ոչ մի առնչություն չունենին միջազգային քաղաքականության հետ, շատ հաճախ, և Կոնվենցիայի որոշ հոդվածների առնչությամբ՝ պարբերականորեն, չի տրամադրել արդարացի բավարարում՝ համարելով, որ խախտման վճիռը ինքնին հանդիսանում է բավարար փոխհատուցում:

Ինչպես Նախագահ Բերնհարդտը նշել էր հիմնական վճիռն կցված իր չհամընկնող կարծիքում, Լուիզիդուի գործը վերաբերում է բազմաթիվ մարդկանց սեփականության մի հարց, որի լուծումը անբաժանելի է Կիպրոսի հիմնահարցի լուծումից: Ուղղակիորեն շահագրգիռ կողմերի առաջարկներն իրենց արտահայտությունն են գտել « Հավաքական գաղափարներ Կիպրոսի ընդհանուր շրջանակային համաձայնագրում» (S/24472):

Երեսուներեք տարվա պատմություն ունեցող միջազգային խնդրի բարդությունը և քաղաքական դժվարություններն անտեսելը, և այդ խնդիրը մեկ անհատական դեպքով սահմանափակելը վստահորեն չի հանգեցնի որևէ շուտափույթ լուծման:

2. Ես այն կարծիքին եմ, որ տվյալ գործում *չպետք է նշանակվեր «արդարացի բավարարում»* և *չպետք է փոխհատուցվեին ծախսերը*:

3. Լուիզիդուի այս գործը միայն դիմողին վերաբերող առանձին գործ չէ (ինչի վառ ապացույցն է հունական վարչակազմի միջամտությունը): Այն վերաբերում է կղզու բոլոր այն բնակիչներին, լինեն նրանք ծագումով հույն, թե թուրք, որոնք տեղահանվել էին 1974թ. տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում. փաստ, որը չպետք է զարմանք առաջացնի: Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի գործի հիմքում ընկած է մի՝ ցավոք անհետացած պետության ապագա քաղաքական կարգավիճակի հարցը, որի պատասխանն են այսօր փնտրում բոլոր միջազգային քաղաքական մարմինները (ՄԱԿ-ը, Եվրամիությունը, Եվրոպայի խորհուրդը և այլն): Այսպիսի կարևորության խնդիրը երբեք չի կարող իջեցվել սոսկ սեփականության իրավունքի պարզ գաղափարին և այդպիսով լուծվել Կոնվենցիայի դրույթի կիրառմամբ, որը երբեք չի նախատեսվել նմանատիպ լայնածավալ խնդիրների լուծման համար:

Ես ամբողջովին համաձայն եմ դատավոր Մորենիլայի չհամընկնող կարծիքում արտահայտված այն պնդման հետ, որ « մեծամասնությունը անիրատեսականորեն անտեսել է այն շրջանի քաղաքական իրավիճակը, որտեղ դիմողն ունի սեփականություն՝ վերջին ութ տարիների ընթացքում նրա հողի օգտագործման և դրա հետագա մշակման և վարձակալության հնարավորությունների կորստի դիմաց նյութական վնասի պահանջի քննության ժամանակ, ինչպես նաև այդ պահանջն անաչառորեն գնահատելիս (սույն վճիռի կետեր 33 և 34)»:

4. Եվ, վերջապես, ինչպես ես նկատել եմ վերը, միջամտելով այս գործին, այսինքն՝ այն ներկայացնելով Դատարան, հույն կիպրական վարչակազմն ամբողջովին փոխել է գործի բնույթը՝ Կոնվենցիայի նպատակների համար: Այն

դարձել է միջպետական գործ: Չնայած խաբուսիկ տպավորությանը, այս գործում դատական և իրավական փուլերում ներգրավված էր հույն կիպրական վարչակազմը: Ինչպես Դատարանն ինքը ընդունել է, միջպետական գործերում նմանատիպ վարույթների հետ կապված ծախսերը և ծախքերը պետք է կրեն իրենք՝ պետությունները: Այդ հանգամանքից ելնելով՝ դիմողը չպետք է ստանար փոխհատուցում ծախսերի դիմաց: Որպես այլընտրանք, համաձայնելով դատավոր Մորենիլայի չհամընկնող կարծիքին, ես կցանկանայի մեջբերել, որ չկար որևէ անհրաժեշտություն, որ «դիմողին Դատարանում և Հանձնաժողովում ներկայացնեին երկու կիպրացի փաստաբաններ և մեկ արտասահմանցի միջազգային իրավունքի մասնագետ, քանի որ, հաշվի առնելով սույն գործի իրավական հարցերի բարդությունը՝ մեկ պաշտպանի ծառայությունները կլինեին բավարար»:

ԴԱՏԱՎՈՐ ՓԵՏԻՏԻ ԶՀԱՍԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ
(Թարգմանություն)

Ես փոքրամասնության հետ քվեարկեցի եզրափակիչ դրույթներում սահմանված որոշման, ինչպես նաև տկն Լուիզիդուին տարբեր չափերի փոխհատուցում նշանակող 2- 5-րդ կետերի դեմ:

Սա անհրաժեշտ էր անել, որպեսզի ես հետևողական լինեի առաջին երկու վճիռներում իմ քվեարկության և չհամընկնող կարծիքներին, մասնավորապես, քանի որ սույն վճիռը, միջազգային իրավունքի առնչությամբ, անդրադառնում է առաջին վճիռին: Առաջին երկու վճիռներում իմ քվեարկությունը պայմանավորված էր Կիպրոսում առկա քաղաքական իրավիճակով և միջազգային իրավունքի իմ մեկնաբանությամբ: Այն հանգամանքը, որ միջազգային զինված ուժը վերահսկում է «կանաչ գիծը» և արգելում է անձանց ազատ տեղաշարժը մի գոտուց մյուսը, ինչպես նաև մյուս գոտում գտնվող սեփականություն մուտքը, իմ համոզմամբ, պետք է հաշվի առնվեր Դատարանի կողմից: Ներկայիս քաղաքական իրավիճակը ապացուցում է, որ, ցավոք, Կիպրոսի խնդիրն ավելի քան դուրս է սոսկ դատական գործի սահմաններից: